ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2013թ. հունվարի 21 թիվ 5-Ա

ԹԱԼԻՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 1997 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ''Զինապարտության մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 7-րդ հոդվածների պահանջները Թալինի զորակոչային տեղամասում 1997թվականին ծնված պատանիների կցագրումն անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1. Կցագրման ենթակա պատանիների բժշկական զննումն անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. 2013 թվականի հունվարի 21-ից Թալինի զինկոմիսարիատում անցկացնել 1997 թվականին ծնված պատանիների կցագրումը, ինչպես նաև արտագնա՝ ըստ բնակավայրերի: Ստեղծել նորմալ պայմաններ կցագրման հանձնաժողովի հետ դաստիարակչական, կուլտուր-մասսայական աշխատանքներ տանելու համար,
   1) տարածքի բնակավայրերում բնակվող 1997 թվականին ծնված պատանիներին ամբողջությամբ ընդգրկել <<Ձև 2>> ցուցակներում և մանրակրկիտ ստուգելուց հետո կազմել կցագրման ենթակա 1997թվականին ծնված պատանիների <<Ձև 3>> ամփոփացուցակը,
   2) կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների ցուցակը ներկայացնել << Թալինի բժշկական կենտրոն>> ՓԲԸ գործադիր տնօրենին նրանց հետագա բուժումը կազմակերպելու համար:
3. << Թալինի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Ա. Խաչատրյանին՝
   1) բժշկական զննության անցկացման նպատակով Թալինի զինկոմիսարիատին ապահովել անհրաժեշտ մասնագետներով և բուժանձնակազմով, բժշկական պարագաներով և դեղամիջոցներով,
   2) նախապատրաստել և ժամանակին զինկոմիսարիատ ներկայացնել 1997 թվականին ծնված պատանիների <<Ձև 25>> ամբուլատոր քարտերը՝ ներդիր թերթիկների հետ,
   3)արդյունավետ կազմակերպել կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների բուժումը և արդյունքների մասին ներկայացնել հանձնաժողովի նախագահին:
4. Առաջարկել Թալինի տարածաշրջանի համայնքների ղեկավարներին, ուսումնական հաստատությունների տնօրեններին՝
   1) Թալինի տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել 1997 թվականին ծնված պատանիներից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև ապահովել կցագրումից դուրս մնացած պատանիների ներկայությունը.

2)ձեռնարկել անհրաժեշտ աջակցություն, որպեսզի զինակոչիկները ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ, անհրաժեշտության դեպքում տրամադրել փոխադրամիջոց:

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա.Բասենցյանին՝

1) դիսպանսեր հսկողության տակ գտնվող 1997 թվականին ծնված պատանիների ամբուլատոր քարտերը և ցուցակները ներկայացնել Թալինի զինկոմիսարիատ:

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ Վ.Գևորգյանին՝

1) Թալինի տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Թալինի սոցիալական ապահովության տարածքային բաժնի կողմից հաշվառված 1997 թվականին ծնված հաշմանդամ պատանիների ցուցակները:

7.Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի բաժնի պետին՝

1)տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Թալինի բաժնի կողմից քրեական պատասխանատվությամբ նախաքննության մեջ գտնվող պատանիների ցուցակները,

2)խիստ հսկողություն սահմանել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության Թալինի անձնագրային բաժնի աշխատանքներին, բացառել զորակոչիկին գրանցելը և գրանցումից հանելը՝ առանց զինվորական հաշվառման կանգնելու և հաշվառումից դուրս գալու:

8. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Թալինի զինկոմիսար Տ. Հայրապետյանի վրա:

Ս.ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2013թ.
հունվարի 21-ի թիվ 5 -Ա կարգադրության

ԿԱԶՄԸ

Թալինի տարածքային զինվորական կցագրման բժշկական հանձնաժողովի

Տ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - Թալինի տարածքային զինվորական կոմիսար, գնդապետ
հանձնաժողովի նախագահ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ - ավագ բժիշկ

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ - հոգեբույժ

Մ. ՀԱՅՐԻՅԱՆ - ատամնաբույժ

Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ - քիթ-կոկորդ –ականջ

Լ.ՍԵԽԵԼՅԱՆ - ակնաբույժ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ - մաշկավեներոլոգ

Հ. ՍԱՆԹՈՅԱՆ - բուժքույր

Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆ - նյարդաբան

Կ. ՓԱՓԱԶՅԱՆ - վիրաբույժ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ